Օրէնքի դիտակցութիւնը, որ այնպէս թուլացել է մեզ մօտ, պէտք է ուժեղացուի, և յանցաւորները պէտք է պատժուեն անխնայ: Պատերազմի արհաւիրքների արդիւնք բազմահազար գաղթականութեան վիճակը թեթևացնելու և պարենաւորման սուր ճգնաժամը մեղմացնելու խնդիրը կառավարութեան լուրջ հոգսերից մէկը պէտք է լինի:

Լայն ընկերային խնդիրների մասին մենք չենք խօսում այստեղ, որովհետև մեր նպատակն է ընդգծել մոմենտի հարցերը: Ինչ ասել կուզէ, որ առաջին իսկ հնարաւոր դէպքում կառավարութիւնը կը զբաղուի սոցիալական լուրջ բարենորոգումներով, և այստեղ կարիք չկայ բացատրելու բնոյթը այդ բարենորոգումների, որովհետև նրանք բղխելու են սոցիալիստներից կազմուած կառավարութեան աշխարհահայեցքից:

Ապաւինելով Հայաստանի աշխատաւոր ժողովրդի ոչ մեկ ուժերին և յենուելով խորհրդարանի վստահութեան և աջակցութեան վրա՝ կառավարութիւնը կը լարէ իր բովանդակ ոյժը, որպէսզի հեռու պահէ երկիրը արտաքին փոթորիկներից և տայ ժողովրդին խաղաղութիւն և անարգել զարգացման հնարաւորութիւններ:

Մեր բուռն փափաքն է դարձնել ազատ և անկախ Հայաստանը ապահով և բարգաւաճ»:

Դեկլարացիան ընդունւում է երկարատև ծափահարութեամբ:

Պատգամաւոր Ս. Թորոսեան. — Հայաստանի խորհրդարանի պատգամաւորներ, Հայաստանի անկախութիւնը, որի համար երազել են տասնեակ տարիներ և դարեր շարունակ, կեանքի կոչուեց շատ ծանր օրերում, երբ աշխարհի հզօրները բաղխում էին, երբ կառավարութիւնը չէր կարող ուրոյն ճանապարհով գնալ: Նորակազմ փոքր պետութիւնների, մանաւանդ մեծ ճանապարհների վրա ապրողների դրութիւնը շատ խախուտ էր:

Մեր ցանկութիւնները չեն իրագործուել, որովհետև բաղխուելով ուժեղների կամքի հետ՝ ջարդւում են: Մեր հանրապետութեան նախկին կառավարութիւններն ունեցել են սխալներ: Սխալներ կունենայ նոր կառավարութիւնն ևս: Բայց այդ սխալները նման են նորածնունդի արարքներին: Մեր հանրապետութիւնը նորածնունդ է՝ երկու և կէս տարեկան: Նրա կեանք առնելու նախօրեակին կատարուեց ռուսական մեծ յեղափոխութիւնը, երբ ամէն ոք լցուում էր նորանոր ցանկութիւններով և ձգտումներով: Դեղերումների նպատակը նորը և լաւը գտնելն էր, որ սակայն, չէր գտնւում: Վերջին դէպքերը մեզ ապացուցեցին, որ մեր հանրապետական զօրքը որակով էլ այնքան բարձր չի եղել, ինչպէս քանակով: Կառավարութեան դեկլարացիան լսելուց յետոյ անհրաժե՛շտ ենք համարում ասելու, որ նախ զօրքի լաւ մարզուելը նպատակ դարձի, աշխատելով որակը մեծապէս բարձրացնել: Լայն ուշադրութիւն դարձնել տեղական ինքնավարութիւնների զարգացման և ուժեղացման վրա: Արդարադատութիւնը և դատարաններն ուժեղացնել՝ ստեղծելով իսկական ուժեղ դատարաններ, խստիւ պատժելով բոլոր յանցաւորներին և չարագործներին: Ինամատարութիւնը, որ բարեկարգ վիճակում է եղել, աշխատել չթուլացնել: Հաղորդակցութեան վրա դարձնել ամենամեծ ուշադրութիւն. դաղտնիք չէ, որ հաղորդակցութիւնը շատ թոյլ է մեզանում: Հաղորդակցութեան կանոնաւոր միջոցներից է կախուած մեր ներքին բնականոն կեանքը: Նորմալ հաշտութիւն կնքել Ադրբէջանի հետ, որի հետ կողք կողքի վիճակուած է մեզ ապրել, պահպանելով խաղաղութիւն և բարեկամական յարաբերութիւններ: Հայաստանը՝ Հայաստանում ապրող ժողովուրդների հայրենիք է. պէտք է ուժեղացնել ներքին համերաշխութիւնը: Թիւրքիայի հետ պէտք է